Պարույր Սևակ

Նահանջ երգով

I

Ես շատ էի նման այն հեքիաթի կատվին,
Որ երբ մինչև անգամ չքանում է աչքից՝
Վառ ժպիտը նրա դեռ մնում է երկա՛ր...
Ես գյուտարարն էի քո այն գեղեցկության,
Որ մի գուցե չկար ինձնից առաջ
Եվ չլինի գուցե ինձնից հետո:
Ու նիրհեցի (գուցե և քնեցի՞)
Քո այդ գեղեցկության ստվերի տակ՝
Բոլոր կասկածներս արձակուրդի ճամփած
Եվ ծածկըված տաքուկ այն չգիտեմ ինչով,
Որ կոչվում է... հավա՞տ, վստահությո՞ւն:
Արթնացել եմ արդեն:
Օ, չէ՛, արթնացի՛ր:
Եվ իմ գրչի ծայրից, օր-ցերեկով,
Մի պուտ մթին գիշեր հենց նոր կաթեց
Այս միամիտ-անմեղ
Մաքուր-ճերմակ թղթին,
Մաքուր-ճերմակ՝
Ինչպես ինքըդ երեկ...

II

Ես գիտեի հաստա՛տ,
Ես գիտեի վաղո՛ւց:
Դա գիտեի՝ նույնիսկ քո ծննդի՛ց առաջ:
Ես սպասում էի և գիտեի՝
Կգա՛ս:
Եվ գիտեի նաև, որ ինձ համար
Քո գալստյան օրը պետք է լինի
Սարսափելի, բայց և հանդիսավոր այնքան,
Որքան հավատացյալ մարդու համար
Ակնկալված օրը Ահեղ Դատաստանի:
Հավատացյալն եմ ես մշտայցելու սիրո,
Եվ օրերի օրը հասա՛վ.
-Եկա՛ր:
Գործած և չքաված իմ մեղքերի ծովից
Ես դուրս եկա մաքուր՝ որպես որոր ճերմակ:
Եվ ինձ պետք չէր դրախտ կամ եդեմյան այգի.
Քաղաքամերձ անտառ և այգիներ կային...

III

Քաղաքամերձ անտառ և այգիներ կային,
Որ ինձ համար դարձան արվեստանոց սիրո...
Թե մինչև իսկ կայիր դու ինձանից առաջ՝
Ես քեզ միանգամայն նորի՛ց ստեղծեցի,
Քեզ տվեցի նո՛ր կերպ՝
Ըստ իմ սիրո:
Ու երբ քաշված մի կողմ՝

Քեզ նայեցի հեռվից,
Սառած իմ աչքերը միանգամից դարձան
Անշեղ հիացմունքի կրակարան երկու:
Ո՞վ չի սքանչանում իր իսկ ստեղծածով...
Իրոք. այդ ես էի, որ քեզ ստեղծեցի,
Այդ ես էի, որ քեզ կյանք տվեցի կյանքում:
Եվ վաղ թե ուշ պիտի դու ապրեիր
Քո առանձի՛ն կյանքով:
Եվ ապրեցի՛ր:
Իսկ ես միայն մարդ եմ:
Ես աստված չեմ բնավ,
Որ բարկանամ հանկարծ և որոշեմ.
-«Ե՛ս տվեցի քեզ կյանք,
Ես էլ ետ եմ առնում»...

IV

Աղջիկները կյանքում ուռենու են նման.
Շա՛տ արագ են աճում:
Եվ աճեցի՛ր:
Ինչ ես էի զգում՝ հասցրրեցիր զգալ,
Ինչ ես էի սիրում՝ դու սիրեցիր:
Ինձ հետ - կմոռանա՞մ - դու երջանիկ էիր
Ավելի, քան գուցե
Դաղձը՝ առվի ափին,
Ցուլի վզին՝ զանգը,
Ջրհորի մեջ՝ աստղը:
-Քեզ ի՞նչ եղավ հանկարծ,
Իմ բախտավո՛ր...
...Քո երգեցիկ քայլից

Իմ ականջի համար
Անդուլ դղրդացող այս քաղաքի
Դժոխային աղմուկն ու ժխորն էր լռում:
-Նվազդ ինչո՞ւ լռեց,
Իմ երգեհո՛ն...
...Ոչ մի արդուկ կյանքում չի՛ հարթեցնում կնճիռ:
Քո ձեռքն - ի՛նքդ գիտես - շա՛տ դյուրին էր հարթում.
-Ձեռքըդ ինչո՞ւ չվեց՝
Ամռան կեսի՛ն...
...Սերն իմ գեղեցիկ էր քնած մանկան նման,
Որ ժպտում է նաև՝ երազի մեջ:
-Ինչո՞ւ արթնացրրիր՝
Լացացնելո՛վ...
...Բայց նման չե՞մ հիմա ես այն մանկանն արդեն,
Որ հարցնում է նաև իր իմացա՛ծ բանից:
-Չէ՞ որ ինքս գիտեմ.
Աղջիկները կյանքում
Ուռենու են նման -
Աճում են շո՛ւտ այնպես:
Եվ աճեցի՛ր:
Հիմա
Ի՞նչ կա զարմանալի,
Որ քո ըստվերի տակ,
Քո շվաքի ներքո
Նաև ուրիշներն են հանգըստանում...

V

Ա՛խ, ես սիրո հարցում երեխա եմ տարեց...
Ու ծխամորճն է լոկ իմ ստընտուն բարի

Եվ իմ աղախինը, որ չորս կողմից հիմա
Շրջապատում է ինձ իր հոգատար ծխով:
Բայց չորս պատերի մեջ բանտված ծուխը հլու,
Համբերությունն արդեն իսպառ հատած,
Ապըստամբում իր դեմ,
Իմ աչքերն է ճանկռում:
Ես ամե՛ն ինչ գուցե կյանքում լինեմ,
Բայց բռնակա՞լ -
երբե՛ք,
Ինչպես էլ նա կոչվի՝
«Հա՞յր», «ղեկավա՞ր», «արքա՞»,-
միևնո՛ւյնն է:
Ու ես բաց եմ անում լուսամուտիս փեղկը՝
Ազատություն շահած ծխին ուղեկցելով
Ներողություն հայցող իմ հայացքով տխուր...
Նո՛ւյն հայացքով հիմա ուղեկցում եմ և քեզ,
Ավելի ճիշտ՝
Ինքըս նահանջում եմ դանդաղ,
Միշտ դեպի քեզ՝ դեմքով,
Մեջքով՝ դեպի այնտեղ,
Որտեղ դու չես լինի,
Բայց կլինես նաև՝
Թեկուզև այն բարի հիշողությամբ,
Թե քեզ ազատեցի՝
չսպասելով
Քո ապըստամբ խոսքին
Եվ ակնարկին անգամ...

VI

Բայց քո սե՛րը... գիտե՞ս.
-Նա ինձ համար նույնն էր,
Ինչ «Ամեն»-ը՝ խորունկ հավատացյալ մեկի...
Թե զգեցած էիր՝
Մարիամ էիր մի նոր:
Թե մերկացած էիր՝
Հելլեն էիր մի հին...
Ասես մի ջերմեռանդ կրակապաշտ՝
Ես քո լույսին էի միշտ կարկառվում...
Քո գրկի մեջ ես ինձ զգում էի հնդիկ
Ու հասկանում էի, թե ինչ է «նիրվանա»...
Եթե մահմեդական ես լինեի,
Եվ լինեի նույնիսկ սուլթան մի ցոփ,
Հարեմ չէի պահի՝
Քո՛ պատճառով...
...Ու նստած եմ հիմա իմ նախընտիր ձևով՝
Այնպես, ինչպես Բուդդան՝
ծալապատիկ,
Բայց խաչված եմ զգում՝
Քրիստոսի՛ նման...

VII

Եվ էջերն եմ շրջում մեր անկատար սիրո,
Ինչպես հավատացյալն՝ Ավետարանն իր սուրբ:
Շա՛տ բան անգիր գիտեմ - որպես աղոթք:
Շա՛տ բան սուտ եմ գտնում - եղել եմ կույր:
Շա՛տ բան հասկանում եմ ես նո՛ր միայն:

Շա՜տ բանի մեջ հիմա նո՛ր իմաստ եմ դնում:
Միայն հավատս է, որ... չի՜ խորանում արդեն:
Իրենց գլուխներն են թերահավատ շարժում
Մրսած զբոսայգու մերկ ծառերը նույնիսկ:
Ու ես տուն եմ դառնում՝
հասկանալով,
Որ ես՝
հավատաքա՛ղց
և հավատի ծարա՜վ,
Ես պատրաստ եմ հիմա
էժան-հարմար գնով
Սե՜ր վաճառել նույնիսկ,
Միայն թե տան հավատ.
Միայն թե կասկածը չփոսանա իմ մեջ,
Ինչպես տաք երկաթը՝ շեղջի մեջ ձյան,
Ինչպես պտուղի մեջ՝ իր իսկ ծնած ճիճուն.
Միայն թե այլևրս չմտածեմ,
Որ շուրթերը նաև համբույրով են ստում
(Խոսքով ստելն ասես քիչ էր, տե՜ր իմ աստված):
...Ինձ պես գունատ պատից՝
քո փոխարեն,
հիմա,
Տիցիան կոչված ինչ-որ արդար մեկի կամքով,
Իմ մեղքերն է լալիս Մագդաղինեն՝
քույրրդ:
Եվ հակառակ գլխիս ու հակառակ կամքիս,
Սիրտըս՝
անուղղելի՛ն,
այդ հիմա՜ը,
դարձյալ

Հավաքել է ուզում տեղեկանքներ սիրո
Եվ հավատի չեղյալ կամ սուտ վկայական՝
Հենց որ խոսում ես դու սիրելո՛ւ պես:
Ու ես խեղդելո՛ւ պես քո ձեռքերն եմ սեղմում...

VIII

Ես աշխարհ եմ եկել,
Որ... ամենքի՛ն ներեմ,
Բայց ո՛չ երբեք նրան, ում սիրում եմ:
-Ինձ նմաններն անգամ... սիրածին չե՛ն ներում...
Բայց ես ի՛նչ եմ ասում: Ինչի՞ համար:
Է՛հ, ասելը հեշտ է:
Թե ասելով լիներ՝
Կարելի էր շուռ տալ աշխարհն իրոք
Եվ իսկույն էլ տեղը մի նոր աշխարհ շինել...
Ու ես, որ ինքնակամ դատապարտել եմ ինձ
Մի՝տնային կոչված՝ բանտարկության,
Բողոքարկման մասին անգամ չխորհելով՝
Լոկ ալիքն եմ փոխում ռադիո-ընդունիչի,
Ինչպես ուրիշները իրենց սերն են փոխում:
Դրսում՝ սառնամանիք,
Եվ ձմռան մեջ, հանկարծ,
Իմ հին բարեկամը, որ Բրամս է կոչվում,
Տարածում է ամա՛ռ,
Լույս ու արև՛,
Ջերմություն է սփռում
Ու փռում շոգ:

Եվ ձմեռն է չվում՝ թռչունի պես ճերմակ:
Ու սուտ-մագաղաթե այն թղթերը շերտ-շերտ,
Որ պինդ սոսընձվելով նեղ ճեղքերին բոլոր՝
Ասես հագցրրել են իմ տան պատուհանին
Աքսորական մարդու զոլ-զոլ հագուստ,-
Մի վայրկյանում պոկվում-ընկնում են վար,
Եվ բաց պատուհանը շքաղուռ է դառնում
Արքայաբար մտնող ամռան համար:
Այս դարը հերքումն է բոլո՛ր հրաշքների
(Նաև՝ հավերժական կոչված սիրո),
Սակայն ներշնչումով իմ այն բարեկամի,
Որ Բրամս է կոչվում և այցելում հաճախ,
Հրաշքին եմ նորից ես հավատում խորունկ:
Եվ ամառը՝
կախած ինձ իր փեշից,
Իսկ քեզ թևը գցած՝
տանում է մեզ
Քաղաքամերձ անտառ...
Դու հիշո՞ւմ ես արդյոք...
Այնտեղ ամառային ստվերն անգամ
Թեթև հագուստի հետ մտնում վեճի
Ու հաղթում էր նրան
Եվ ստիպում,
Որ կանաչի վրա կարկատանվենք՝
Ստեղծելով մի հին բարձրաքանդակ:
Դու հիշո՞ւմ ես արդյոք...
Պճնում էի ես քեզ
Անտառային լայնթուփ տերևներով
Ու պսակում էի շարով ծաղիկների,
Որ դու ամեն ինչով ճավայուհի դառնաս,

Ու մեզ մի պահ զգանք ջունգլիներում...
Դու հիշո՞ւմ ես արդյոք...
Ինչո՞ւ հիշել սակայն:
Չէ՛, ավելի լավ է, որ հասկանամ հիմա,
Թե քեզ կորցրեցի ջունգլիներում կյանքի,
Թե իսկապես շուտով ամառ կգա կրկին,
Բայց մենք էլ չե՞նք լինի մեկըս մեկի համար...
Կգա կրկին ամառ,
Եվ տառապած փոշին
Ագահ կներծրծի անձրևի ջուրն այնպես,
Ասես վալերյանի կաթիլներ է ըմպում,
Որ չլինի ինձ պես ուշագնաց...

IX

Եվ ինձ նման ամպած երկինքն է լուռ ձնում:
Ու մայթերն են իրենց դեմքին շպար դնում:
Դու չունեիր ոչ նե՛րկ,
Ոչ շպա՛ր ու սնգո՛ւյր:
Դու ի՞նչ էիր, գիտե՞ս, թե ի՞նչ էիր:
Դու կին էիր, բայց և աղջիկ ու քույր,
Սնդիկի սյա՛ն նման ուղիղ ու ջինջ էիր,
Իշակաթնո՛ւկ չէիր, այլ սինձ էիր,
Գինի՛, որ չի տալիս մրուր-տականք:
Եվ ի՞նչ.
Դու քե՞զ չէիր, այլ ի՞նձ էիր
Այս ամենի համար լոկ պարտական...

X

Ձյուն է գալիս կրկին:
Եվ վաղո՞ւց է արդյոք:
Հանդիպակաց շենքի քիվ-ճակատի լայնքին
Նա նստել է հիմա
Վիրակապի նման:
Իսկ իմ խեղճ ճակատը, ի՛նչ է, կարիք չունի՞:
Ու ես դուրս եմ գնում՝
Ապաքինման հույսով:
Անհոգորեն սուլող ինչ-որ ջահել քամի,
Ինչպես երևում է՝ դեռ չսիրահարված,
Իմ պատանի կյանքն է հիշել տալիս կարծես...
Եվ սառցապատ մայթը, որ իսկական դեմքին
Ձնի փափկությունն է որպես դիմակ հագել,
Ինքն իրեն է մատնում՝
Ստում ամեն վայրկյան.
Ու ես սայթաքում եմ ՝
ետ ու առաջ,
դես-դեն...
Ձյունն է անվերջ տեղում:
Կարծես ուռկան լինի,
Հսկայական մի ցանց՝
Նետված երկնից երկիր:
Ասես հսկա մի ձուկ այդ ուռկանում գերված,
Ուռկանն այդ քարշ տալով ու տանելով ինձ հետ՝
Ես լողում եմ առաջ,
Ո՞ւր -

չգիտե՞մ:
Այս ձյուն-ձմեռվա մեջ՝
Ողջ իմ ներսն է տենդում,
Նոր դողէրոցքով է ասես հիվանդ հոգիս,
Ուստի զարմանալի ոչի՛նչ չկա,
Թե մտքերըս բոլոր զառանցանք են թվում...
Ձյուն է գալիս: Անվե՛րջ:
Նա ե՞րբ դադար կառնի:
Ու ե՞րբ դադար կառնի և այս զրույցը մեր,
Որ նման է երկու խուլի խոսակցության...